Հ. Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԸ (1890—1906)

Ա. Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հ. Հ. Դաշնակցությունը, ինչպես հայտնի է, ասպարեզ իջավ 1890 թվականին՝ Թիֆլիսում, Մոսկվայում, Պետերբուրգում և կովկասյան այլ քաղաքներում անջատաբար գործող հայ երիտասարդների հեղափոխական խմբակների միավորման (դաշնակցության) հետևանքով։ Նրա հիմնադիրները (Քր. Միքայելյան, Ս. Զավարյան, Ռ. Զորյան և ուրիշներ) սոցիալական տարբեր խավերից ելած կովկասահայ մտավորականներ էին՝ խանդավառված հայ ժողովրդի քաղաքական ազատագրմանը ծառայելու ազնիվ ձգտումներով։

Միասնական ուժեղ համահայկական կազմակերպության հիմքը դնելու համար հարկավոր էր ամենից առաջ միավորել այլազան հոսանքներն ու ձգտումները, հաշտեցնել սկզբունքային տարակարծությունները ապագա ազատ Հայաստանի վարչաձևի հարցում. ոմանք այդ շրջանում բավականանում էին Ներսես Վարժապետյանի ծրագրով (վեց նահանգների ինքնավարություն եվրոպական հսկողության ներքո), մյուսները, ինչպես, օրինակ, հնչակյանները դնում էին Հայաստանի անկախության պահանջ՝ սոցիալիստական կարգավիճակով։

Սոցիալիզմի հարցը, ի թիվս այլ խնդիրների, կարևոր տեղ էր գրավում դաշնակցության հիմնադիր ժողովներում։ Այդ ժամանակաշրջանում, հնչակյաններից բացի, սոցիալիստական գաղափարներով հրապուրված էին նաև «Հայրենասերների Միության» և «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության մի շարք անդամներ, որոնք հետագայում ղեկավար դիրքեր գրավեցին դաշնակցության մեջ։

Սոցիալիզմը, գրել է դաշնակցության նշանավոր գաղափարախոս Մ. Վարանդյանը, «մարդկային ցեղի ամենեն վսեմ վարդապետությունն է, որ նպատակ ունի ազատագրելու **աշխատավոր և առապող զանգվածները** *ամեն տեսակ լուծերե-քաղաքական, տնտեսական, կրոնական- և հասցնելու զանոնք լիակատար ազատության ու բարօրության։ Այդ մտքով ընկերվարական (սոցիալիստ) էին և՛ Քրիստափոր, Զավարյան և՛ շատ մը ուրիշ ընկերներ, վասնզի իսորապես ժողովրդասեր էին, դեմոկրատ, վասնզի ուսանողության օրերեն փոխ առեր էին ռուս ու արևմտյան ռահվիրաններեն* **ժողովրդի պաշտպանությունը՝** *հարստահարվածի և հալածվածի աշխատավոր ընդհանրության պաշտամունքը»*[1]։

Այսուհանդերձ, դաշնակցականներն անընդունելի էին համարում հնչակյան կուսակցության ներկայացուցիչ Ռ. Խանազատի այն պայմանը, որ նոր կազմվելիք կուսակցության ծրագրի մեջ տեղ տրվի սոցիալիստական սկզբունքներին։ Նրանք ելնում էին այն համոզմունքից, որ սոցիալիզմը «հեռավոր ապագայի իդեալ մըն է», որ եթե սոցիալիզմ բառը սուր կերպով դրվեր հայկական շրջանների մեջ, «պիտի խրտչեին շատ շատեր անգետ, անպատրաստ հասարակութենեն ու անգամ դեմոկրատ մտավորականներեն- և միությունը պիտի վիժեր»։ Մինչդեռ իրենց գլխավոր նպատակն էր մեկ դրոշի տակ համախմբել «բոլոր սրտացավ հայրենասերները, հանուն ընդհանուր պայքարի՝ ընդդեմ ընդհանուր ոսոխի՝ սուլթանական բռնապետության»[2]։

---

[1] *Մ ի ք. Վ ա ր ա ն դ յ ա ն, Հ. Ց. Դաշնակցության պատմություն, հ. Ա, Փարիզ, 1932, էջ՝ 62—63։*

[2] *Նույն տեղում, էջ 63—64, նաև՝ Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, 1887—1962, հ. Ա, Բեյրութ, 1962, էջ 43։*

Ռ. Խանազատը, անդրդվելի մնալով իր տեսակետի վրա, հայտարարում է, որ հնչակյան կուսակցությունը նոր կազմակերպությանը կմիանա միայն այն դեպքում, եթե նրա ծրագիրը սոցիալիստական լինի[3]։

Ստեղծված դժվարությունները հաղթահարելու համար դաշնակցության հիմնադիրները ձգտում էին կուսակցության նպատակը այնպես ձևակերպել, որ հնչակյան կուսակցությունն էլ մտներ ընդհանուր միության մեջ։ Նրանք հայտարարեցին, որ «բառերին մեծ նշանակություն չեն տալիս, գլխավորը գործն է...»[4]։

Երկար բանավեճերից հետո մշակվող ծրագրի մեջ նոր կուսակցության նպատակն է հռչակվում «Թուրքաց Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատությունը», որով գոհացում էր տրվում բոլոր հոսանքներին և «գործող խմբերին»։ Այս բանաձևը հնարավորություն էր տալիս միավորել բնակչության բոլոր խավերին՝ առանց «դասակարգի և ընկերային դավանանքների խտրության»։

Այսպիսով, դաշնակցության գլխավոր նպատակը հայրենիքի ազատությունն էր. մյուս բոլոր հարցերը ստորադաս և ապագայի խնդիրներ էին։ Հիմնադիր ժողովներում ընդունված որոշման համաձայն հնչակյան կուսակցությունն էլ մտավ նոր ստեղծվող միության մեջ։ Սակայն նախնական պայմանավորվածությունը գործնական մարմնավորում չստացավ։ Ժնևի կուսակցական կենտրոնի որոշմամբ հնչակյանները մեկուսացան դաշնակցությունից։

Դաշնակցության պաշտոնական օրգան «Դրոշակ» թերթի առաջին համարում, որը լույս տեսավ 1891 թ. մայիսին, ավելի հստակ է նշմարվում կուսակցության մոտեցումը մարքսիստական ուսմունքի նկատմամբ։ Սկզբունքորեն ընդունելի համարելով սոցիալիզմի գաղափարը՝ դաշնակցության օրգանը գտնում էր, որ այն դեռևս կիրառելի չէ արևմտահայ իրականության հանդեպ։ Սոցիալիզմի համար, պնդում էր «Դրոշակը», «այժմ կարելի է մաքառել միայն Արևմտյան Եվրոպայում. քանի որ Տաճկահայաստանը չունի բոլորովին գործարանական արդյունաբերություն և խոշոր հիրուստրիայի զարգացում՝ անբնական է այդ տեսակ խնդիրներ հարուցանելը։ Այն երկրում, ուր գերակշռում է երկրագործությունը և նահապետական կուլտուրան՝ խոսք չի կարող լինել Արևմտյան Եվրոպայի սոցիալիզմի մասին, ուր կուլտուրան անհամեմատ ավելի բարձր է և տիրապետում են որոշ սոցիալական պայմաններ։ Տնտեսական խնդիրներ շոշափելիս պետք է ղեկավարվել երկրի կուլտուրայով և նրա ազգային ու պատմական առանձնահատկություններով...»[5]։ Մեկ տարի անց «Դրոշակը» կրկին հավաստում է իր դիրքորոշումը. «Ինչպես հեռավոր անցյալին, նույնպես և իդեալական ապագային մենք տալիս ենք երկրորդական նշանակություն»[6]։

Սակայն քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, միջազգային սոցիալիստական շարժման ծավալումն ու հարաճուն ազդեցությունը կուսակցության ղեկավարներին ստիպում են նոր դաշնակիցներ փնտրել հայ դատի պաշտպանության ասպարեզում։ Հետզհետե ուժեղանում է նաև այն մտայնությունը, թե մարքսիստական հեղափոխական ուսմունքը կարող է սուլթանական բռնակալության դեմ ուղղված պայքարի մեջ ներքաշել ոչ միայն հայ ժողովրդի լայն զանգվածներին, այլև թուրքերին ու Թուրքիայի ազգային փոքրամասնություններին։

Արդեն 1893—1894 թթ. դաշնակցության վերաբերմունքը մարքսիզմի նկատմամբ սկսում է փոխվել։ Կուսակցության քաղաքական դիրքորոշման այդ էվոլյուցիան ճիշտ մեկնաբանելու համար հարկավոր է հաշվի առնել նաև

---

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

5 Դրոշակ, 1891, № 1։

6 Նույն տեղում, 1892, № 3։

այն քաղաքական գործիչների աշխարհայացքային տարբերությունները, որոնք հայրենասիրական հողի վրա դաշնակցելով հիմնեցին նոր կուսակցությունը։ Նրանց շարքերում, ինչպես նշվեց, կային սոցիալիզմի գաղափարներն անկեղծորեն համակրող գործիչներ։ Եվ չնայած այն բանին, որ բարձրագույն նպատակի՝ հայրենիքի ազատագրության նպատակի հանդեպ այդ հարցերը ստորադաս նշանակություն ունեին, քաղաքական պայմանների փոփոխման համեմատ որոշակի դեր էին խաղում։

1894 թ. օգոստոս և սեպտեմբեր ամիսներին «Դրոշակը» «Մեր ծրագիրը» խորագրով հրատարակում է Հ. Հ. դաշնակցության հավատո հանգանակը՝ առաջին ծրագիրը, կազմված 1892 թ. ամռանը, ընդհանուր ժողովում։

Ծրագրի ներածական մասը գրվել էր ընդհանուր ժողովից հետո, Ռոստոմ Զորյանի կողմից, և առանց ընդհանուր ժողովի քննության բովից անցնելու կցվել էր ծրագրին, հաջորդ՝ երկրորդ ընդհանուր ժողովում վավերացվելու պայմանով[7]։

Կուսակցության ծրագրի ներածական մասը, ինչպես նշում են դաշնակցության պատմագիրները, իր վրա կրում է «անջնջելի կնիքը այն լավատեսության, որ մարքսյան վարդապետությունը ուներ ընկերվարության մոտալուտ հաղթանակի մասին»[8]։ Դրեթե մեկ դար առաջ դաշնակցության առաջին դավանագիրը հավատավոր շնչով ավետում էր, որ «իշխող դասակարգերն ընկնում են ավելի և ավելի թե՛ ֆիզիկապես և թե՛ բարոյապես», «աշխատանքը հետզհետե ձեռք է ձգում իր իրավունքները», իսկ «կեղեքվող տարրը հսկայական քայլերով մոտենում է իր վերջնական հաղթության»։ Այդ «կեղեքվող տարրը», ըստ ծրագրի, կհասնի կատարյալ հաղթանակի, երբ կվերանան ամեն տեսակ դասակարգեր, երբ աշխատանքի միջոցներն ու արդյունքը կդառնան աշխատավորի կատարյալ սեփականություն, «երբ մարդոց կառավարության կփոխարինե իրերի կառավարությունը»[9]։

Տեսության եզրափակիչ տողերում, արձանագրելով, որ «խոր անդունդ է բացվում հարուստների և աղքատների միջև» և անդրադառնալով «երկրի հարստության տեր բուրժուազիայի» և «օրվա հացի կարոտ պրոլետարիատի» անողոք պայքարին, ծրագիրը կոչ էր անում կռվել «տնտեսական այդ չարիքի, տնտեսապես կեղեքող դասի դեմ», պահպանել գոյություն ունեցող համայնական սկզբունքները, տարածել համայնական սեփականատիրությունը, համայնական աշխատանքը, «որպեսզի ավելի պատրաստ գտնվենք անցնելու այն հասարակական կազմակերպության, որն այսօր-էգուց կհաստատվի տնտեսապես ավելի զարգացած երկրներում պրոլետարիատի հեղափոխությամբ»[10]։

Այս տողերի մեջ կան, իհարկե, չբյուրեղացած մտքեր, ոչ հստակ ձևակերպումներ, սակայն միևնույն ժամանակ չի կարելի չտեսնել նաև մարքսիստական ուսմունքի ակնհայտ ազդեցությունը իր ամենաձախ ըմբռնումով։ Վերլուծելով իր կուսակցության առաջին ծրագրի ներածությունը, դաշնակցական գաղափարախոս Վ. Նավասարդյանը հետևյալ գնահատականն է տվել նրան. «Խորհել, թե «այսօր-էգուց պրոլետարիատի հեղափոխությամբ» տնտեսապես ավելի զարգացած երկրներում «մարդկանց կառավարության կփոխարինե իրերի կառավարությունը՝ այս նշանակում է տառը-տառին կրկնել այն, ինչ ասում էին ամենեն ձախ՝ անհող ու ցնորատես՝ մարքսիստները»[11]։ Մեկ այլ հոդվածում նույն Վ. Նավասարդյանը նկատում

---

7 Ցուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան (1890—1950), Բոստոն, 1950, էջ 165։

8 Նույն տեղում, էջ 178։

9 Դրոշակ, 1894, № 11։

10 Նույն տեղում։

11 Ցուշապատում Հ. Յ. Դաշնակցության, էջ 179, տե՛ս նաև՝ Վ. Նավասարդյանի «Ընկերվար վարդապետությունը և Հ. Յ. Դաշնակցությունը» [Հայրենիք, 1923, հունվար (էջ 34—42) և փետրվար (էջ 51—62)]։

է, որ «միայն մարքսիստ Ռոստոմին վայել էր գրել այն կես կիսաբոլշևիկյան ներածությունը, որ ունի մեր անդրանիկ ծրագիրը»[12]։

Իհարկե, սխալ կլիներ միայն ներածականի նշված դրույթների հիման վրա ամբողջական կարծիք կազմել նորակազմ կուսակցության դավանած ղեկավար սկզբունքների մասին։ Այն փաստը, որ ներածականը ծրագրին է կցվել առանց համագումարի գիտության, առանց նրա կողմից նախապես մշակված և ընդունված լինելու, գալիս է հավաստելու, որ «հայ առաջին գործոն հեղափոխականներին բնավ հետաքրքրողը այն չէր, ինչ մենք տեսնում ենք այսօր տասնամյակներ առաջ տպագրված ծրագրի մեջ»[13]։ Նրանց միավորողը շարունակում էր մնալ Արևմտյան Հայաստանի ազատագրության գաղափարը։

Դաշնակցականներն ուղղակի հայտարարում էին ծրագրում, որ իրենք ասպարեզ չեն եկել իբրև «այս կամ այն ուտոպիական վարդապետության պատկանողներ», ուստի և չեն ձգտում հայ իրականության մեջ ներմուծել այս կամ այն «դավանությունը» իր «հանգանակներով» հանդերձ։ Նրանք գտնում էին, որ առայժմ հարկ չկա ժողովրդին նկարագրել «այս կամ այն իդեալական հասարակական կազմակերպությունն իր բոլոր մանրամասնություններով», քանի որ ձգտում էին, որ իրենց ծրագիրը «կենսական լինի»[14]։

Կուսակցության նպատակն էր հռչակվում «բռնի հեղափոխության» միջոցով թոթափել սուլթանական «խայտառակ լուծը, ոչնչացնել ներկա միապետական բռնակալ ռեժիմը, ձեռք բերել ազգերի համերաշխություն, աշխատանքի ապահովություն, խղճի, խոսքի ու համոզմունքի ազատություն»։

Կուսակցության առաջին դավանագրի վերլուծությունը ցույց է տալիս, որ դաշնակցության հիմնադիրների համար գաղափարական հարցերն առաջնային դեր չէին խաղում։ Նրանք հեռավոր, տակավին անորոշ նպատակները ստորադասում էին մերձավոր, հրատապ նպատակներին, տեսական սկզբունքները՝ կյանքի անողոք պահանջներին։ Դեռ ուսանողության տարիներին հրապուրված լինելով սոցիալիստական գաղափարներով, նրանք, այնուամենայնիվ, նպատակահարմար չէին գտնում մարքսիստական ուսմունքի և գործելակերպի վրա խարսխել հայ հեղափոխական շարժումը, թեև չէին մերժում սոցիալիզմի գաղափարն իբրև առաջավոր մարդկության հեռավոր իդեալ, որը, իրենց կարծիքով, օրակարգի հարց կարող էր դառնալ սեփական «ազգային տունը» ունենալուց հետո։

Ինչպես իրավացիորեն նշում է Ռ. Դարբինյանը, դաշնակցության հիմնադիրների համար «սոցիալիզմը եղավ գերազանցապես բարոյական մեկ պահանջ, տեսական մեկ սկզբունք, բայց ոչ քաղաքական հրատապ գործ»[15]։ Իսկ Դ. Անանունը, խոսելով երկու հայ քաղաքական կուսակցությունների ծրագրերի սոցիալիստական բաժնի մասին, ընդգծում է, որ «դաշնակցականները ռեալիստ լինելով՝ ժամանակաձառ չէին լինում մի բանի առիթով, որ չէր պատշաճում թուրքահայ միջավայրին»[16]։

«Դրոշակը» իր էջերում սուր բանավեճ էր վարում «Հնչակի» հետ։ Նրանց միջև մարքսիզմի տեսության հարցերում առաջ են գալիս սկզբունքային տարաձայնություններ, որոնք վերաբերում էին Հայաստանում մարքսիստական դրույթների գործնական կիրառման հնարավորությանը։ 1894 թ. տպագրված «Այբ ու բեն» հոդվածում[17] «Դրոշակը» նշում է, որ հայ աշխատավոր ընդ-

---

12 Վ. Նավասարդյան, Հայ անկախության գաղափարը մերձավոր անցյալի մեջ, (Հայրենիք, 1924, փետրվար (թիվ 4), էջ 78—79)։

13 Նույն տեղում, էջ 79։

14 Դրոշակ, 1894, № 10։

15 Ռ. Դարբինյան, Հայ քաղաքական մտքի ղեկերումները (Հայրենիք, 1922, նոյեմբեր, № 1, էջ 56)։

16 Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 2-րդ, էջմիածին, 1922, էջ 223։

17 Դրոշակ, 1894, № 7, № 8։

հանրությունը կազմում են առայժմ «գյուղական ազգաբնակչությունը արհեստավոր դասի հետ միասին», այդ աշխատավոր ընդհանրությունը, որը «ըստ Հնչակի անխուսափելի կերպով պետք է պրոլետարիատ դառնա, դեռևս չի դառել, դեռևս սաղմնային դրության մեջ է, ինչպես խոստովանում է և ինքը՝ Հնչակը»[18]։ Վիճարկելով «Հնչակ» թերթի այն պնդումը, թե հայությունը բաժանվում է երկու դասակարգի՝ «հայ պրոլետարիատի և հայ բուրժուադասակարգի», թե հայ գյուղացին, թողնելով հողը և գնալով արդյունաբերական քաղաքներ, դառնում է «վարձկան բանվոր» և այլն, «Դրոշակն» ընդգծում էր, որ հայ գյուղացին, թողնելով հողը, չի մնում իր մայրենի երկրում, այլ գաղթում է օտար երկրներ և այնտեղ միայն, Հայաստանից դուրս, կարողանում է դառնալ «վարձկան բանվոր»։ Իր երկիրը վերադառնալուն պես նա դադարում է բանվոր լինելուց, «նա նույն հողագործն է, նույն արհեստավորը»։ Ուստի և, ըստ «Դրոշակի», եթե նա կարող է «դիմադրական կուսակցություն» կազմել, ապա միայն այն երկրներում, որտեղ ինքը բանվոր է։ «Իսկ թե ինչպես Ամերիկայի, Հունաստանի, մինչև իսկ Պոլսի բանվորներից Հնչակը պետք է «ապագայի դիմադրական կուսակցություն» ստեղծի Հայաստանի համար, այդ միայն Աստված գիտե»[19]։

Այսուհանդերձ, փաստերը վկայում են, որ դաշնակցությունը, համաձայն իր ընդունած ծրագրի դրույթների[20], հայ պարբերական մամուլի էջերում արծարծել է սոցիալիստական ուսմունքի մի քանի հարցեր, հրատարակել առանձին մարքսիստական երկեր։

Հայ իրականության մեջ սոցիալիստական գաղափարների ժողովրդականացման գործում որոշակի դեր է պատկանում Ֆ. Էնգելսի «Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն» աշխատությանը, որը հայերեն թարգմանությամբ առաջին անգամ հրատարակվեց 1894 թ. Ժնևում (գրքի կազմի վրա կոնսպիրատիվ նպատակով տպագրության վայր է նշված Վիեննան)։ Հիշյալ աշխատությունը «Գիտական սոցիալիզմ» խորագրով հրատարակվեց դաշնակցության ազատ տպարանում[21]։

Նշված գրքի հայերեն հրատարակության առաջաբանում («Երկու խոսք») հակիրճ բնութագրվում է Ֆ. Էնգելսի աշխատության նշանակությունը գիտական սոցիալիզմի տեսության ուսումնասիրության գործում և հայ ընթերցողին հայտնվում է, որ սոցիալիզմի մասին այս առաջին գրքույկին կհետևեն նոր հրատարակություններ, որոնք «որոշ ու ընդարձակ գաղափար կտան այդ գիտության մասին»։

Եվ իրոք, նույն թվականին գերմաներենից հայերեն է թարգմանվում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»։ Թարգմանությունն իրականացվում է Հովսեփ Աթաբեկյանցի և մեկ այլ կովկասահայ ուսանողի՝ Միքայել Հովհաննիսյանի համատեղ ջանքերով, որոնցից առաջինը «հետագայում հայտնի եղավ իբրև Պետական Դումայի անդամ Կարսի շրջանից, իսկ երկրորդը... հարեց Դաշնակցությանն և եղավ սրա հանրածանոթ գաղափարախոսը Միքայել Վարանդյան անունով»[22]։ Վերջինս

---

18 Նույն տեղում, № 8։

19 Նույն տեղում։

20 Առաջին ծրագիրն ազդարարում էր, որ դաշնակցության օրգան «Դրոշակ» թերթում «կհրատարակվեն նաև ժողովրդական ու գիտական-սոցիալիստական գրվածքներ» (Դրոշակ, 1894, № 11)։

21 «Դրոշակի» 1894 թ. № 7-ում թերթի խմբագրությունը հայտնում է, որ «Մամուլի տակ է Ֆրիդրիխ Էնգելսի գիտական սոցիալիզմը», իսկ թերթի նույն թվականի № 10-ում արդեն ազդարարվում է. «Լույս տեսավ Գիտական սոցիալիզմ (թարգման.), հեղինակ. Ֆրիդրիխ Էնգելսի»։ Միք. Վարանդյանի «Հայրենիքի գաղափարը» (Ժնև, 1904) գրքի շապիկի վրա նշված «Հայ հեղափոխական դաշնակցության հրատարակությունները» ցանկում հիշատակվում է նաև Ֆ. Էնգելսի «Գիտական սոցիալիզմ»։

22 Վերելք, 1924, № 4—5։

Հ. Աթաբեկյանի մահախոսականում պատմում է, թե ինչպես էին իրենք Շտուտգարտի իրենց «փոքրիկ, անհրապույր սենյակում» թարգմանում «տենդագին եռանդով Մարքս-Էնգելսյան հռչակավոր մանիֆեստը»[23]։

Այսպիսով, «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» 1894 թ. հայերեն թարգմանության իրականացումը, ինչպես նաև Ֆ. Էնգելսի «Գիտական սոցիալիզմի» հայերեն հրատարակությունն անմիջականորեն առընչվում են Դաշնակցություն կուսակցության անվան հետ։ Ինքը՝ Հ. Աթաբեկյանցը, ճիշտ է, դաշնակցության անդամ չի եղել, բայց համենայն դեպս այդ տարիներին համագործակցել է նրա հետ։

Բերված փաստերը, ինչպես նաև 1890-ական թվականների կեսերին «Մուրճ», «Տարազ» հանդեսներում ու «Դրոշակ» թերթում հրատարակված նյութերը վկայում են, որ դաշնակցության մի շարք անվանի գործիչներ, դեռևս եվրոպական համալսարաններում ուսանելու տարիներին հրապուրվելով մարքսիզմի «համայնաբույժ», «համայնափրկիչ» զորությամբ, փորձում էին հետզհետե տարածվող այդ ուսմունքի միջոցով հիմնավորել ու առաջ մղել «հայկական հեղափոխությունը»։ Ինչպես խոստովանել է հետագայում Մ. Վարանդյանը, նրանք որպես «նոր վարդապետության մոլեռանդ նորընծաներ» շտապում էին իրենց գրական առաջին փորձերում ժողովրդականացնել այն[24]։

«Մուրճ» ամսագրի 1894—1895 թթ. մի շարք համարներում հրապարակվում են Մ. Հովհաննիսյանի (Մ. Վարանդյան) «Կապիտալիզմի զարգացումը», «Խոշոր ինդուստրիայի զարգացումը» ընդարձակ հոդվածները[25], որտեղ զետեղված են (առանց աղբյուրը նշելու) «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» առաջին գլխի երկու էջը, բերված են բազմաթիվ ծավալուն քաղվածքներ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Կ. Կաուցկու, Ա. Բեբելի, Վ. Լիբկնեխտի աշխատություններից։ Խոսելով եվրոպական կապիտալիզմի ծագման և զարգացման մասին՝ հոդվածագիրը ներկայացնում էր կապիտալիստական հասարակության դասակարգային հակամարտության, բանվորների ծանր կացության պատճառները, պարզաբանում ռանվոր դասակարգի պատմական դերի մարքսիստական ըմբռնման էությունը և այլն։

Ուշագրավ է, որ «Մուրճի» խմբագիր Ա. Արասխանյանը Մ. Հովհաննիսյանի «Խոշոր ինդուստրիայի զարգացումը» հոդվածի առթիվ խմբագրական ծանոթություն տվեց, հայ ընթերցողին հայտնելով, որ «Մուրճի» խմբագրությունը «վերաբերվում է դեպի սոցիալիզմը կրիտիկաբար... ընդունելով նաև սոցիալիզմի մեջ զարգացման առողջ սաղմեր։ Մինչդեռ... հոդվածի հեղինակի (Մ. Վարանդյանի —Ա. Ս.) համար գոյություն չունի կրիտիկական վերաբերմունք դեպի սոցիալիզմը, և սոցիալիստ գրողներն ու գործիչները նրա համար մի-մի մարգարեներ են և նոցա խոսքերը՝ մի-մի պատգամներ»[26]։

1894—1895 թվականներին մարքսիզմը դրվատող, նրա գաղափարները պրոպագանդող հոդվածներ լույս տեսան նաև «Տարազ» շաբաթաթերթում։ Հոդվածների հեղինակը Գ. Խաժակյանն էր (Խաժակ)՝ դաշնակցության աչքի ընկնող գործիչներից մեկը։ Այդ հոդվածների շարքում առանձնանում է 1895 թ. «Տարազի» մի շարք համարներում հրատարակված «Դիալեկտիկական մատերիալիզմ կամ պատմության մատերիալիստական հասկացողություն» ընդարձակ հոդվածը[27]։ Բազմաթիվ քաղվածքներ բերելով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի երկերից՝ Գ. Խաժակյանը ներկայացնում է մարքսիզմի հիմնադիրների դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի էությունը,

---

23 Մ ի ք. Վ ա ր ա ն դ յ ա ն, Ընկերոջ հիշատակին (Հորիզոն, 1916, № 14)։

24 Մ. Վ ա ր ա ն դ յ ա ն, Միքայել Հովհաննիսյան և Կ. Մարքսի «Մանիֆեստը» (Հորիզոն, 1916, № 77)։

25 Մուրճ, 1894, № 10, 1895, №№ 1, 6, 11։

26 Նույն տեղում, 1895, № 11, էջ 1451—1452։

27 Տարազ, 1895, №№ 27, 28, 29, 30, 31, 35, 36, 37։

պաշտպանում մատերիալիզմի մարքսիստական ըմբռնումը տարբեր հեղինակների քննադատությունից։ «Միամիտ և կոպիտ սխալ», «աբսուրդ և անմտություն» անվանելով «տնտեսական դիալեկտիկ մատերիալիզմի» հասցեին հնչող այն մեղադրանքը, թե նա «երբեք չի ընդունում գաղափարների ազդեցությունը» և «մատերիալիստ» է բառիս ամենակոպիտ նշանակությամբ, Դ. Խաժակյանը պարզաբանում է, որ «մատերիալիզմը երբեք չի ժխտում գաղափարների, «խելքի», բարոյականության դերը, բայց պնդում է, որ բոլորի արմատը, ծնող-մայրը տնտեսականն է, արդյունագործության միջոցներն են»[28]։

1890-ական թվականների երկրորդ կեսից սոցիալիստական գաղափարներ քարոզող հոդվածներ են հրապարակվում նաև դաշնակցության կենտրոնական օրգան «Դրոշակ» թերթում։ Նրա էջերում սկսում են հիշատակվել Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի անունները, քաղվածքներ են բերվում նրանց աշխատություններից։ «Դրոշակի» 1897 թ. փետրվարի 8-ի համարում զետեղված «Դիվանագիտություն» հոդվածի հեղինակը, մերկացնելով ցարական Ռուսաստանի նենգամիտ քաղաքականությունը Հայկական հարցում, նշում է, որ ռուսական կառավարությունը, «ընկերային առաջադիմության այդ սարսափը, ինչպես կասեր Մարքսը, մինչև վերջը Կայենի մը դեր կատարեց Հայկական հարցի մեջ»[29]։

Մեկ ուրիշ հոդվածում, հանգամանորեն վերլուծելով 1897 թ. քաղաքական իրադարձությունները, «Դրոշակն» արձանագրում է. «Մի ամբողջ դար է գրեթե, որ սոցիալիզմի ուրվականը շրջում է Եվրոպայում, բայց վերջին տասնամյակներում էր գլխավորապես, որ նա տարածեց իր ցանցերը քաղաքակիրթ աշխարհի վրա, զորացավ և ամուր հաստատվեց մանավանդ Գերմանիայում»[30]։ Սոցիալիստական շարժման ծավալումը հոդվածի հեղինակը բացատրում էր նրանով, որ արդյունագործության արագ զարգացմանը զուգընթաց այդ երկրում տեղի էր ունենում բանվոր դասակարգի դրության հետագա վատթարացում և «բյուրոկրատ պետության» ճնշման ու հալածանքների ուժեղացում։ Ընդգծելով, որ օրըստօրե «լայնանում է անդունդը բանվոր և բուրժուա դասակարգերի միջև», «Դրոշակը» տեղեկացնում էր իր ընթերցողներին, որ այդ պայմաններում արագորեն աճող սոցիալիստական կուսակցությունն արդեն խոշոր ուժ է կազմում պառլամենտներում, իսկ նրա «վիթխարի գործադուլները այսօր, այս վայրկյանիս, դղրդացնում են ամբողջ բուրժուական աշխարհը»[31]։

«Դրոշակի» նշված հոդվածում, որ կրում է «Քաղաքական տեսություն» խորագիրը, սոցիալիզմը բնորոշվում է իբրև օրինաչափ ու անխուսափելի մի երևույթ, որից «փրկություն չկա», իբրև «մի մոլեգին ուժ», որը «գլուխ կբարձրացնի և կխորտակի բուրժուական թագավորությունը»։ Ամփոփելով ասվածը՝ «Դրոշակը» ահազանգում էր. «Բանվորական հարցը միշտ ավելի զարգանալով՝ հյուսում է արդեն բուրժուական Եվրոպայի մահապատանը։ Նա մի ուրիշ, բոլորովին տարբեր խաղաղություն է պատրաստում—մի խաղաղություն, ուր կթագավորե իրական հավասարությունը և իրական եղբայրությունը»[32]։

«Դրոշակը» 1898 թ. հունիսի 30-ին տպագրում է «Պրոլետարիատի հաղթանակը» հոդվածը, որտեղ հստակորեն ուրվագծվում է դաշնակցության դիրքորոշումը բանվորական և սոցիալիստական շարժման նկատմամբ։ Կուսակցության պաշտոնաթերթը հայտնում էր հայ ընթերցողին, որ ֆրանսիական, բելգիական և հատկապես գերմանական վերջին պառլամենտական ընտրու-

---

28 Նույն տեղում, 1895, № 36, էջ 506—508։

29 Դրոշակ, 1897, № 3։

30 Նույն տեղում, 1898, № 1։

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում։

թյունների արդյունքները «ցնծությամբ ողջունվում է այսօր համայն աշխարհի բանվոր ընդհանրության կողմից», քանի որ «պրոլետարիատը ամեն տեղ տարավ հաղթանակը. բուրժուազիան և հողային ավատականությունը ամոթալի պարտություն կրեցին»։ Սոցիալ-դեմոկրատիայի այդ հաղթանակը «Դրոշակը» համարում էր «սոցիալիզմի անսայթաք ու վիթխարի առաջընթացության» վկայություն[33]։

«Դրոշակը» իր էջերում անդրադառնում է նաև սոցիալիստական շարժման՝ այդ «մեծ համաշխարհային հոսանքի ծագման» նախադրյալներին, բացահայտում է դասակարգային հակամարտության պատճառները[34]։ Դասակարգային ատելությունը, ըստ թերթի, խոր ու վտանգավոր բնույթ է ստացել երկու հակամարտ դասակարգերի՝ բուրժուազիայի և պրոլետարիատի միջև, որոնցից առաջինը տեր է արդյունագործության միջոցների (հողի, դրամի, մեքենաների), իսկ երկրորդը՝ զուրկ ամեն սեփականությունից։ Կապիտալիստական շահագործման «հրեշավոր» աճը և դրան զուգընթաց սաստկացող պրոլետարիատի թշվառությունը ստեղծել են ժամանակի ընթացքում, ինչպես նշում է «Դրոշակը», «վիճակների մի ահռելի հակապատկեր». մի կողմից՝ զանգվածային «քաղց ու մերկություն», մյուս կողմից՝ «առասպելական հարստություններ, պերճանք ու վայելքներ։ Բանվորական աշխարհը սկսեց խլրտալ, ալեկոծվել»[35]։

«Դրոշակը» Կ. Մարքսին համարում է «19-րդ դարի ամենախոշոր սոցիալական փիլիսոփան, որը մ:ահացու հարված տվեց կապիտալիստական հասարակության ամբողջ սիստեմին»[36]։ Թերթի մեկ այլ համարում Կ. Մարքսը հայ ընթերցողին է ներկայացվում իբրև «գարուս ամենափայլուն դեմքը», որը «կոչված էր ի մի ձուլելու համայն աշխարհի բանվոր ընդհանրությանը»[37]։

Դրա հետ մեկտեղ «Դրոշակը» նկատում է, որ «երիտասարդ Մարքսը գուշակում էր 1848-ի բուրժուական հեղափոխությունից հետո անմիջապես սոցիալական հեղափոխությունը, որը արմատից պիտի ջնջեր դասակարգերի հակառակությունը և պիտի սահմաներ մարդկանց մեջ կոմունիստական հավասարություն»։ Սակայն մոտիկ ապագան, ինչպես ցավով նշում է թերթը, չարդարացրեց այդ վառ հույսերը, և սոցիալիստ մտածողները, որոնք մինչ այդ «հավատում էին սոցիալական հեղափոխության շուտափույթ գալստյան և սոցիալիզմի մոտալուտ հաղթանակին, այժմ ընդունում են, որ այնպիսի մի վիթխարի հարց, ինչպես հասարակության արմատական հեղաշրջումն է, պահանջում է տարաբախտաբար երկար, շա՜տ երկար ժամանակի անդուլ աշխատանք...»[38]։

1901 թ. «Դրոշակի» մի քանի համարներում զետեղված «Տասնիններորդ դար (քաղաքական-սոցիալական տեսություն)» հոդվածաշարում խոսվում է սոցիալական շարժման զարգացման առանձնահատկությունների, կապիտալիզմի զարգացման սոցիալական հետևանքների մասին։ Թերթի խմբագրությունը բանվորական շարժման սկզբնավորման ու ծավալման պատճառները բացատրում է նրանով, որ աշխատավոր դասակարգերը, բոլոր երկրներում լինելով ճնշված ու իրավազուրկ, «զգացին շուտով, որ նրանց բոլորի վրա միևնույն կապիտալիզմի լուծն է ծանրանում, որ նրանք բոլորն էլ եղբայրակիցներ են դառն ճակատագրի և բնազդորեն իրար մերձենալու փորձեր արեցին»։ Այս պայմաններում «պրոլետարիատի հասուն խավերը սկսեցին երազել բոլոր ճնշվածների վերջնական ազատումը և ընդնշմարեցին ապագայի մառախուղների մեջ մի նոր սոցիալական կազմակերպություն»։ Այդ նոր սոցիալական կազմակերպությունը՝ սոցիալիզմը, «Դրոշակի» կողմից

33 Նույն տեղում, 1898, № 6։
34 Նույն տեղում, 1900, № 6։
35 Նույն տեղում։
36 Նույն տեղում։
37 Նույն տեղում, 1900, № 8։
38 Նույն տեղում։

բնորոշվում է իբրև այնպիսի մի հասարակարգ, որտեղ «չեն լինի դասակարգեր, չեն լինի իշխողներ ու հպատակներ, ուր աշխատանքը, քաղաքակրթությունը և նյութական վայելքները հավասարապես բաժին կլինեն յուրաքանչյուրին»[39]։

1903 թվականից «Դրոշակը» սկսում է նյութեր հրապարակել նաև Կովկասում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների, այդ թվում և այնտեղ ծավալվող բանվորական շարժման վերաբերյալ։ Այսպես, 1903 թ. հուլիսին թերթը հայտնում է Բաքվում հուլիսի 5-ին սկսված գործադուլների ալիքի մասին[40]։ «Դրոշակը» նշում է, որ «փաստի տպավորությունը մեծ է, իրարանցումը՝ չափազանց»։ Նույն համարում հաղորդագրություն է տպագրված Թիֆլիսում հուլիսի 14-ին երկաթուղային կայարանում սկսված բանվորական գործադուլների մասին։

Միևնույն ժամանակ դաշնակցության կենտրոնական օրգանը շարունակում է հայ ընթերցողին պատմել միջազգային սոցիալ-դեմոկրատիայի հաջողությունների, նրա ազդեցության հետագա աճի մասին։ «Սոցիալիզմի «պատուհասը» հոդվածում, խոսելով Գերմանիայում վերջին ընտրությունների ժամանակ սոցիալ-դեմոկրատների տարած խոշոր հաղթանակի մասին, «Դրոշակը» սոցիալ-դեմոկրատիային անվանում է «պետություն բուրժուական հյուծվող պետության մեջ»[41]։ Ազդարարելով «սոցիալիզմի սրարշավ առաջադիմության», «վարդապետության մեծ նվաճումների մասին», նա միևնույն ժամանակ նշում է. «Թեպետև արդյունագործության ու դրամագլխի կենտրոնացումը տեղի չի ունենում Մարքսի և Էնգելսի նախագծած չափերով, թեպետև խոշոր արդյունաբերության կողքին... սունկի պես բսնում են մանր արդյունագործության այլևայլ ճյուղեր, թեպետ և աստիճանական թշվառացման թեորիան անվիճելի իրողություն չէ, թեպետև ժամանակակից աշխատավորի վիճակը ընդհանուր առմամբ բարձրանում է և ոչ վատթարանում,—այնուամենայնիվ սոցիալիզմի գաղափարը անսայթաք առաջ է գնում»[42]։ Դաշնակցության օրգանը «անհուն բերկրանքով ողջունում է սոցիալ-դեմոկրատիայի հաղթանակները», երազելով տեսնել այն «պանծալի օրը», երբ «տիեզերական եղբայրության արշալույսը կծագի հին աշխարհի փլատակների վրա»[43]։

Միջազգային սոցիալիստական շարժման մի շարք ականավոր գործիչներ հանդես էին գալիս ճնշված ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ազատագրական պայքարի պաշտպանի դերում՝ իրենց երկրների պառլամենտների ու հասարակայնության ուշադրությունը հրավիրելով թուրքական բռնապետության հայաջինջ քաղաքականության վրա։ Պարբերաբար անդրադառնալով միջազգային սոցիալիստական շարժման համաժողովների աշխատանքի լուսաբանմանը, «Դրոշակն» իր ընթերցողների ուշադրությունն էր հրավիրում նրանց հայանպաստ գործունեության վրա։ Իրենց հերթին դաշնակցական գործիչներն՝ ակտիվորեն մասնակցում էին միջազգային սոցիալիստական համաժողովների աշխատանքին, ձգտելով տարբեր երկրների սոցիալիստների ուշադրությունը բևեռել հայկական հարցի արդարացի լուծման անհրաժեշտության վրա։ Այսպես, դաշնակցության ներկայացուցիչները, մասնակցելով և զեկուցումներով հանդես գալով 1900 թ. սեպտեմբերի 23-ին Փարիզում հրավիրված Միջազգային սոցիալիստական համաժողովին, նույն տարվա հոկտեմբերի 1-ին Փարիզում բացված սոցիալիստական մամուլի առաջին համաժողովի աշխատանքներին[44], համագործակցելով Բրյուսելի միջազգային սոցիալիստական բյուրոյի հետ[45] և նրանց ուշադրությունը հրա-

39 Նույն տեղում, 1901, № 2։
40 Նույն տեղում, 1903, № 6։
41 Նույն տեղում։
42 Նույն տեղում։
43 Նույն տեղում։
44 Նույն տեղում, 1900, № 8։
45 Նույն տեղում, 1901, № 7։

վիրելով հայ ժողովրդի ողբերգական վիճակի վրա, քաղաքական սուր հնչեղություն էին հաղորդում Հայկական հարցին։ Վերջապես, նշված սոցիալիստական համաժողովներն ընդունում են հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը պաշտպանող և Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը դատապարտող բանաձևեր, որոնք լայն արձագանք են գտնում եվրոպական սոցիալիստական մամուլում և հասարակական լայն շրջաններում[16]։

Հայկական մամուլում համանման փաստաթղթերի հրապարակումը, որոնցով միջազգային սոցիալիստական կազմակերպությունները հանդես էին գալիս հայ ժողովրդի շահերի պաշտպանությամբ, իրենց հերթին որոշակի դեր խաղացին հայ իրականության մեջ սոցիալիստական շարժման գաղափարների տարածման գործում։

Այդ տարիներին, արդեն հիշատակված մարքսիստական գրականությունից բացի, «Հ. Յ. Դաշնակցության» հրատարակությամբ լույս տեսան նաև Ժ. Գեդի և Պ. Լաֆարգի «Տնտեսական զարգացումը և սոցիալիզմը», Է. Վանդերվելդի «Բանվոր դասակարգի դրությունը Բելգիայում», Ջեռնովի «Դասակարգային կռվի թեորիայի շուրջ», «Պրոլետարիատը և աշխատավոր գյուղացիությունը» գրքերի հայերեն թարգմանությունները և այլ հրատարակություններ։

Դաշնակցության այս գործունեությունն առանձին պատմաբաններ բացատրում են «Վ. Ի. Լենինի բացահայտած այն օրինաչափությամբ», ըստ որի «մարքսիզմին թշնամի հոսանքները... տեսնելով բանվորների անհաղթահարելի տարերային ձգտումները դեպի մարքսիզմն ու սոցիալիզմը...», ստիպված էին լինում «մարքսիստի զգեստ հագնել»[47]։ Իսկ Ա. Կարինյանը, նշելով, որ «Էնգելսի «Գիտական սոցիալիզմի» առաջին թարգմանությունը հրատարակվել է, որքան էլ դա տարօրինակ է, դաշնակցականների կողմից», միևնույն ժամանակ դա համարում էր «մարքսիզմի հետ կոկետություն անելու» արտահայտություն[48]։

Դժվար է պատկերացնել, թե ինչպես կարող էին հայ բանվորները տակավին 1880-ական թվականներին և 1890-ական թվականների կեսերին «անհաղթահարելի ձգտումներ» հանդես բերել դեպի մարքսիզմը, երբ այդ ուսմունքի տարրերը նոր պիտի թափանցեին հայ իրականության մեջ և դրանց առաջին տարածողներն էլ պիտի լինեին հենց իրենք՝ «մարքսիզմին թշնամի բուրժուական հոսանքները»։

Համոզիչ չէ նաև այն փաստարկը, թե մահվան սպառնալիքի մշտական մղձավանջի մեջ ապրող տաճկահայ աշխատավորների վստահությունը կամ թե Թուրքահայաստանի ազատագրման գաղափարով տոգորված ռուսահայ զանգվածների համակրությունը շահելու համար հարկավոր էր «մարքսիստի զգեստ հագնել»։

Ժողովրդական լայն զանգվածներին հուզողը այդ ժամանակաշրջանում, իհարկե, մարքսիզմը չէր։ Ժամանակակիցների հուշերը վկայում են, որ այդ թվականներին և թե ավելի ուշ լինում էին դեպքեր, երբ ռուս-թուրքական սահմանագլխի հայաբնակ վայրերում հայ գյուղացիներն ամբողջ համայնքներով դադարեցնում էին իրենց վարուցանքը այն հույսով, որ այսօր-վաղը ազատություն է լինելու Հայաստանում և իրենք պիտի գաղթեն՝ վերջապես իրենց երջանկությունը գտնելու հայրենի «Ազատ Երկրում»։ Հայ «իդեալիստ մտավորականությունը», լավագույն երիտասարդությունը, ուսանողությունը և դեմոկրատիան «սնված և հափշտակված էին Հայաստանի ազատագրության գաղափարով»։ «Կատարյալ անապատային դրության մեջ էր մարդ իրեն զգում այն ամեն դեպքերում,—վկայում է Գ. Ղարաջյանը,—երբ որևէ քայլ

---

46 Դրոշակ, 1901, № 8, նոյեմբեր, № 9, դեկտեմբեր։

47 Լ. Ա ր ա ր հ ա մ յ ա ն, Հայաստանում մարքսիզմի տարածման պատմությունից, Երևան, 1959, էջ 18—19։

48 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4045, ց. 1, գ. 323, թ. 6։

էր ուղում անել մասսաների սոցիալ-քաղաքական կրթության գործում, երբ խոսքից ե գաղափարից գործնականին անցնելու փորձ էր կատարում բանվորական և այլ դեմոկրատական խավերի քաղաքական-հեղափոխական գիտակցության զարգացմանը նպաստելու համար»[49]։

Այս պայմաններում դժվարությամբ էր հաջողվում նույնիսկ գումարել բանվորների, արհեստավորների կամ մտավորականների ժողով և առաջին խոսքը շատ հաճախ լինում էր այն, թե ինչ կարծիք և վերաբերմունք ունեն սոցիալիստները կամ սոցիալ-դեմոկրատները դեպի Հայկական հարցը։ Երբ վերջիններս աշխատում էին նրանց բացատրել, թե «տաճկահայերի ազատագրության գործը իրենց տաճկահայերի գործը պետք է լիներ, իսկ ռուսահայ բանվորությունը, գյուղացիությունը և այլն իրենց քաղաքական կուսակցությունները պետք է հիմնեն քաղաքական և սոցիալական ազատագրության նպատակներին ծառայելու համար, սկսվում էր անմիջապես անվերջ հակաճառությունը, որից հետո սովորաբար ժողովականները ցրվում էին, իսկ հաջորդ անգամին այլևս չէին հավաքվում»[50]։

Ինչ վերաբերում է դաշնակցության գաղափարախոսներին, ապա նրանք «սոցիալիստական նորաբողբոջ շարժմանը» աջակցելու անհրաժեշտության մասին խոսելիս միևնույն ժամանակ ընդգծում էին, որ այդ շարժումը չի կարող շեղել և չպետք է շեղի դաշնակցությանը «իր կենտրոնական մտահոգությունից, որ է՝ ազգային պաշտպանության գործը»։ Նրանց դիրքորոշումը բխում էր այն համոզմունքից, որ «հայրենիքի արյունաներկ տեսարանի առաջ, խորտակված օջախների և լացող ավերակների դիմաց» իրենք իրավունք չունեն մոռանալու իրենց առաջնակարգ, «սրբազնագույն պարտավորությունը, որի առջև նսեմանում են բոլոր ուրիշ մտահոգությունները»[51]։

Միանգամայն ակներև է, որ չնայած սոցիալիզմի գաղափարը ընդհանուր առմամբ ընդունելուն, մարքսիզմը երբեք դաշնակցության համար չի եղել գերագույն ճշմարտությունների և անսխալականության մարմնացում, որը պետք է մեխանիկորեն, առանց ազգային առանձնահատկությունները հաշվի առնելու, կիրառվեր հայ իրականության նկատմամբ։ Այն փաստը, որ դաշնակցությանն առհասարակ խորթ է եղել գաղափարական մոլեռանդությունը, բնավ պատահական չէ։ Հայ ժողովրդի մղած գոյապայքարի այդ օրհասական տարիներին հայրենասերների կուսակցությունը, հայ դատի պաշտպանությունը որդեգրած կուսակցությունը չէր կարող լինել միաժամանակ նաև մարքսիստական կուսակցություն՝ հանդես գալով պրոլետարիատի նեղ դասակարգային շահերի պաշտպանության դիրքերից։ Այն պայմաններում, երբ Թուրքական դարավոր լծից Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդիրը վերածվել էր համազգային գաղափարի, իր շուրջը համախմբելով հայ ժողովրդի լայն զանգվածներին, իր ժողովրդի ազգային շահերը պաշտպանող կուսակցությունը չէր կարող բոլոր ուժերը ընդհանուր թշնամու դեմ համախմբելու փոխարեն դասակարգային թշնամանք բորբոքել բուն ժողովրդի ներսում, ջլատել նրա ուժերը հանուն անորոշ ու վերացական իդեալների։

Դժվար է չհամաձայնվել Մ. Վարանդյանի այն տեսակետին, որ «հայ կյանքում սոցիալիզմի ու ազգայնության, ինչպես նաև «սոցիալականի» ու «քաղաքականի» հարաբերության ըմբռնումը վաղեմի ժամանակներում անհամեմատ ավելի առողջ, ավելի զգաստ ու խելացի էր»։ «Առաջին հայ սոցիալիստները»,—արձանագրում է նա,—նույնիսկ մարքսիստները բռնեցին այդ կարդինալ հարցի դիմաց այն միակ ուղիղ, ռեալիստական դիրքը, որ վայել է հայ ինտելիգենտին՝ իր հայրենի ցավատանջ իրականության հանդեպ։ Սոցիալիզմ դավանելով հանդերձ, նրանք չդարձրին ռուսների պես սոցիալական հարցը իբրև իրենց գործունեության մի տեսակ առանցք, այլ կարո-

49 Նույն տեղում, ֆ. 1022, ց. 6, գ. 64, թ. 122—123։

50 Նույն տեղում։

51 Մ. Վարանդյան, Հայրենիքի գաղափարը, էջ 89—90։

զացան ըմբռնել կյանքի անողոք հրամայականը և գրեցին իրենց դրոշի վրա հայ քաղաքական ազատագրության դատը»[52]։

Դաշնակցական գործիչները հայտարարում էին, որ հայկական կյանքում կան միայն համազգային, հավաքական շահեր, որ հայ ժողովրդի առանձին հատվածները, մասնավորապես կովկասահայությունը, չպետք է մասնակցեն Ռուսաստանում ծավալվող հեղափոխական պայքարին՝ ուժերը չլատելու, արևմտահայության ազատագրության պայքարից չշեղվելու համար։ Այդ ամենի հիմքում ընկած էր այն համոզմունքը, որ հայ իրականության մեջ չկարող էր արտահայտված դասակարգային հակամարտություն, և դաշնակցությունն էլ իբրև համաժողովրդական կուսակցություն պետք է ելներ ողջ ժողովրդի շահերից։ «Ի՞նչ է «դասակարգային կռիվների» դերը այն ահռելի տարտարոսի մեջ,—գրում էր Մ. Վարանդյանը,—ուր բացակայում է—թե «բուրժուայի» և թե «պրոլետարի» համար—նույնիսկ ապրելու, աճելու իրավունքը։ Ո՞վ է այն աստիճան խզել պարտքի և առողջ դատողության հետ, որ գնա քարոզեն սոցիալիստական թեորիաները՝ ջարդի հարատև կոշմարի տակ ապրող Մշեցուն, Վանեցուն... Կամ ի՞նչ է նույն այդ «դասակարգային կռվի» ծավալը կովկասյան Հայաստանում՝ համեմատած այն խոր, արյունահոս վերքերի հետ, որոնք բացված են ազգային մարմնի վրա...»[53]։

Հայ ժողովրդի համար կործանարար համարելով դասակարգային պայքարի հրահրումը՝ դաշնակցական մամուլը քարոզում էր ազգային համախմբման, ժողովրդի բոլոր հեղափոխական ուժերը մեկ ընդհանուր թշնամու դեմ միավորելու գաղափարը։ Նրա դատողությունների հիմքում ընկած էր այն միտքը, որ հայ բնակչության բոլոր խավերը՝ գյուղացին, արհեստավորը, վաճառականը, հոգևորականը և վաշխառուն, բոլորն էլ «հավասարապես տենչում են թոթափել արդի մարդասպան ռեժիմը», որ նրանց բոլորի շահերն էլ «գոնե թեորիապես, ներդաշնակվում են տիրող ռեժիմի ոչնչացման մտքի հետ»[54]։

«Պատմական շարիք» անվանելով հայ ժողովրդի ազգային համախմբմանը խոչընդոտող գաղափարական տարաձայնությունները, «Դրոշակը» 1901 թ. խարազանում էր այն քաղաքական գործիչներին, որոնք «հանուն «գերագույն շահերի» միայն թունավորում են հասարակական կարծիքը և կամ օր ու գիշեր օդը թնդացնում են հանուն բանվորական «հավելյալ աշխատանքի», բայց մնում են ստոիկյան սառնասիրտներ մի ամբողջ ժողովրդի «հավելյալ արյան» դիմաց»[55]։

Դաշնակցության գաղափարախոսության համաձայն հասարակության մեջ կան շահեր, որոնք բարձր են կանգնած և պետք է վեր դասվեն պրոլետարիատի նեղ դասակարգային շահերից։ Դրանք համամարդկային արժեքներն են, ընդհանուր առաջադիմության և քաղաքակրթության զարգացման շահերը։ «Կան վայրկյաններ, երբ այդ աշխատավոր դասակարգի շահը իր նեղ մտքով փոքր-ինչ նսեմանում է, երբ սոցիալիստական ինտելիգենցիայի կուսակցության համար անհրաժեշտ է լինում գերադասել պրոլետարիատի շահերից՝ ընդհանուր հասարակական պրոգրեսի, ընդհանուր կուլտուրայի շահերը»[56]։

Մ. Վարանդյանն ուղղակի հայտարարում էր, որ դասակարգային պայքարը «արդար և օրինավոր է, բայց նա չպետք է արտահայտվի նախնական բիրտ ձևերով», քանի որ, ըստ նրա, ոչ մի տեղ աշխատավորությունը շահագրգռված չէ «իր ազգակից բուրժուազիայի ավերումով», ուստի և երբեք չպիտի ցանկանա, որ «այդ համացեղ արդյունաբերող դասակարգը կուլ

52 Մ. Վարանդյան, Հոսանքներ, ժնև, 1910, էջ 88, 189։

53 Մ. Վարանդյան, Հայրենիքի դաղափարը, էջ 90։

54 Դրոշակ, 1898, № 7։

55 Նույն տեղում, 1901, № 3։

56 Մ. Հովհաննիսյան, Դաշնակցությունը և նրա հակառակորդները, Թիֆլիս, 1906, էջ 80։

դնա ուրիշ, դրսցի կապիտալիստների մրցման մեջ և տնտեսապես կորստյան մատնվի»[57]։ Նույնիսկ դասակարգային կռվի ժամանակ, ընդգծում էր նա, «չպետք է տարվել դասակարգային մանր էգոիզմով, այլ պետք է պաշտպանել նաև մարդկայնությունն ու արդարությունը, ամեն անգամ, երբ դրանք վտանգված են»[58]։ Այդ նպատակով էլ հարկավոր էր «ճիշտ համախմբել հայության բոլոր կենսական տարրերը, առանց խտրության դասակարգերի...»[59]։

Գաղափարական նույն դիրքերում էր կանգնած նաև Գ. Խաժակյանը «Մենք չունենք պրոլետարներ և բուրժուազիա,—գրում էր նա,—մենք ունենք ճնշվածներ ու ճնշողներ, ահա այդ ճնշվածների կուսակցությունն է դաշնակցությունը»[60]։ Ճնշվածներ ասելով դաշնակցական գործիչը նկատի ուներ հայ ժողովրդին որպես հավաքական ամբողջություն, իսկ ճնշողներ ասելով՝ թուրքական բռնապետությունը։

Վճռականորեն մերժելով պրոլետարիատի դասակարգային շահերը հասարակության հավաքական շահերին հակադրելու փորձերը, դաշնակցության տեսաբանները քննադատում էին «ուղղափառ մարքսիզմի երկրպագուներին», ազդարարում, որ Ռուսաստանի և Կովկասի սոցիալ-դեմոկրատները տրամադիր են դարձնել պրոլետարիատին «մարդկության ամենամեծ, տիրական կուլտը, մյ։ գերագույն «սրբության սրբոց», անաղարտ ու անմեղանշական»[61]։ Նրանց կարծիքով «կրիտիկական մարքսիզմի» ծառայություններից մեկն էլ այն եղավ, որ նա «մեղմացրեց այդ միամիտ պաշտամունքը, մի քանի աստիճան վայր իջեցրեց այն կուռքը, որի առջև գետնատարած, զուտ կրոնական երկյուղածությամբ ծունր են իջնում մարքսիզմի հետևողները»[62]։

Այսպիսով, դաշնակցությունը, իր գործունեության որոշակի ժամանակահատվածներում սոցիալիստական գաղափարներ տարածելով հանդերձ, չդարձավ նեղ իմաստով մարքսիստական-բանվորական կուսակցություն։ Այս հանգամանքը հատուկ շեշտում են նաև իրենք՝ դաշնակցության գաղափարախոսները։ «Որքան ալ մեր երրորդությունը, դեռ ուսանողական օրերեն, ջերմ փարած լիներ ընկերվարության գաղափարին,—ընդգծում է Մ. Վարանդյանը,—որքան ալ խոր լիներ անոր հավատը դեպի գալոց արդար, մարդկային իրավակարգը,—այնուամենայնիվ, կուսակցությունը, որ հիմնեցին Քրիստափոր, Ռոստոմ, Զավարյան ու ընկերները զուտ ընկերվարական կուսակցություն մըն չէր և նա չդարձավ այդպիսին անգամ 1907 թվականին, երբ համառուսական շարժումներու հետևանքով, ընդունվեցավ ընկերվարական ծրագիրը Վիեննայի ընդհանուր ժողովին մեջ։ Ղեկավարող մտավորականությունն էր վարդապետության դավանողը—ոչ զանգվածը։ Հակառակ մնացին ընդհանրապես և ռազմիկ տարրերը, թեև ընդդիմություն չէին ներ»[63]։ «Դաշնակցության սոցիալիզմը,—նշում է նա,—շատ քիչ անգամ իջավ գրականության տեսական մարզեն դեպի գործնական կյանքի հրապարակը, վասնզի այդ կյանքի առանցքը կկազմեին մշտահալած ցեղի հավաքական գոյամարտը, անոր պարտադրած «վճռական հրամայականները»[64]։

Դաշնակցական գործիչների տեսական ժառանգության ուսումնասիրությունը ակնհայտ է դարձնում, որ մարքսիզմը նրանց հրապուրել է նախ և առաջ հավասարության, սոցիալական արդարության գաղափարներով։ Միևնույն ժամանակ նրանց վանել ու զգաստացրել է նոր հեղափոխական տեսության մեջ նշմարվող կոսմոպոլիտիզմը, որն արտահայտվում էր ազգային

57 Մ. Վարանդյան, Վերածնվող հայրենիքը և մեր դերը, ժնև, 1910, էջ 351—352։

58 Մ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 76։

59 Նույն տեղում, էջ 21։

60 Նոր խոսք, 1906, № 14։

61 Ալիք, Թիֆլիս, 1906, № 21։

62 Նույն տեղում։

63 Միք. Վարանդյան, Հ. Յ. Դաշնակցության պատմությունն, հ. Առաջին, Փարիզ, 1932, էջ 120։

64 Նույն տեղում, էջ 495։

հարցը բանվորական հարցի հանդեպ ստորադաս համարելու, պրոլետարիատի նեղ դասակարգային շահերը համազգային շահերից վեր դասելու միտումների մեջ։

Դաշնակցության գործիչների գաղափարական էվոլյուցիան հստակորեն ուրվագծվում է Մ. Վարանդյանի աշխատություններում, այն Վարանդյանի, որին դեռ 1895 թ. հայ լիբերալ բուրժուական մամուլը կշտամբում էր մարքսիզմն անվերապահորեն ընդունելու, սոցիալիզմին «ոչ կրիտիկաբար վերաբերվելու» համար։

Հատկանշական է, որ տարիներ անց Մ. Վարանդյանն ընդունեց Ա. Արասխանյանի այս դիտողությունը, իր նախկին մոտեցումը համարելով «երիտասարդական մեղք», «նորընծա մարքսիստի մտայնության արդյունք», որից ազատվել է արդեն վաղուց։ «Իսկ ահա «դասիստները» (ռուսական սոցիալ-դեմոկրատները), ըստ Վարանդյանի, սակավաթիվ բացառությամբ, մնում են հավիտենորեն նորընծայի վիճակում, մտածում են միշտ ուրիշների ուղեղներով—Կաուցկու, Լենինի, Պլեխանովի...»[65]։

Դաշնակցության այդ գործիչները երկար չմնացին մարքսիզմի «նորընծաների» դերում և հետագայում այդպես անվերապահորեն չէին ընկալում մարքսիզմը, ինչպես «Մուրճի» և «Տարազի» հիշատակված հոդվածներում։ Դեպքերի զարգացման ընթացքը և «կյանքի անողոք հրամայականները» ստիպում էին այլ կերպ վերաբերվել մարքսիստական կանխատեսումներին։ Նրանք չէին մերժում սոցիալիզմի գաղափարը իբրև սոցիալական արդարության ու հավասարության մարմնավորում, շարունակում էին պրոպագանդել այն, բայց, լինելով իրենց ժողովրդի ազգային դատին նվիրված հայրենասեր մտավորականներ, նրանք արդեն մարքսիզմն անցկացնում էին իրենց ազգային շահերի պրիզմայով, ուստի և նոր հեղափոխական ուսմունքն ընդունում էին լոկ այն չափով, ինչ չափով որ այն կարող էր նպաստել իրենց ժողովրդի ազգային իղձերի իրականացմանը։

Մ. Վարանդյանը, մասնավորապես, իր մտահոգությունն էր հայտնում մարքսիզմի այն դրույթների առթիվ, որոնք «մոլորության պատճառ են լինում, որոնք ընթերցողին... կարծել են տալիս, թե սոցիալիզմը ժխտում է հայրենիքի գաղափարը, թե նա թշնամի է ազգայնության։ Դեռ 1848 թվին Մանիֆեստի մեջ Կարլ Մարքսը հայտարարում էր հանդիսավոր կերպով, թե «աշխատավորները հայրենիք չունեն...[66]»։

Մատնանշելով, որ «ազգային շարժումը չպետք է հակասե սոցիալիստական շարժմանը», դաշնակցական գործիչ իրավացիորեն նկատում է, որ «անգույն, ֆրազամոլ կոսմոպոլիտիզմը, անտարբերությունը դեպի ազգային-հավաքական ստացվածքները՝ արգելք են լինում ժողովրդային մեծ զանգվածներին՝ հարելու սոցիալիզմին»[67]։

Այսպիսով, հետազոտվող ժամանակաշրջանում Դաշնակցություն Իրուսակցությունը որոշակի դեր է խաղացել Հայաստանում սոցիալիստական գաղափարների տարածման, հայ հեղափոխական մտքի զարգացման գործում։ Միևնույն ժամանակ, Դաշնակցություն կուսակցությունը պրոլետարիատի դասակարգային շահերը ստորադաս է համարել հասարակության հավաքական շահերի հանդեպ։ Մարքսիզմը հայ իրականությանը հարմարեցնելու միջոցով նա փորձել է նոր հեղափոխական գաղափարախոսությունը հաշտեցնել հայ ժողովրդի ազգային շահերին և դրանով իսկ խթանել հայ ազգային-հեղափոխական շարժումը։

Դրա հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ Հ. Հ. Դաշնակցությունը մարքսիստական գաղափարների իրագործման ուղղությամբ գործնական քայլեր չի ձեռնարկել՝ համոզված լինելով, որ Հայաստանում դրա համար համապատասխան նախադրյալներ չկան։

---

65 Հորիզոն, 1916, № 77։

66 Մ. Վարանդյան, Հայրենիքի գաղափարը, էջ 32։

67 Նույն տեղում, էջ 88—89։

АРМЯНСКАЯ РЕВОЛЮЦИОННАЯ ПАРТИЯ ДАШНАКЦУТЮН И ИДЕЯ СОЦИАЛИЗМА (1890—1906)

А. А. САРКИСЯН

Резюме

Партия Дашнакцутюн уже в середине 90-ых годов XIX века пропагандировала в армянской периодической печати социалистические идеи. Однако принимая идею социализма как воплощение равенства и социальной справедливости, идеологи партии вместе с тем решительно отвергали теорию классовой борьбы. В тех условиях, когда в Армении не было остро выраженного классового антагонизма, когда задача освобождения Западной Армении от векового турецкого ига переросла в общенациональную идею, сплотившую вокруг себя широкие слои армянского народа, в этих условиях партия, защищающая национальные интересы, не могла идти по пути искусственного разжигания классовой борьбы внутри самого народа ради неопределенных и абстрактных идеалов.

ARMENIAN REVOLUTIONARY PARTY DASHNAKT-UTJUN AND THE IDEA OF SOCIALISM (1890—1906)

A. H. SARKISIAN

Summary

The party Dashnaktsutjun already in the middle of 90-s of the XIXth c. propagandized socialist ideas in the Armenian periodical press. However admitting the idea of socialism as embodiment of equality and social justice, at the same time ideologists of the party resolutely rejected the theory of classical struggle. In those conditions, when there was no sharply expressed antagonism in Armenia, when the problem of liberation of West Armenia from the secular Turkish yoke turned into national idea, uniting large layers of Armenian people, in these conditions party, speaking in support of national interests, couldn't go on the way of artificial kindling of classical sruggle in the people himself, for the sake of uncertain and abstract ideals.